



Համակարգային խնդիրները խոշտանգման դեմ պայքարում

Խոշտանգման դեմ պայքարում առկա են նաև համակարգային խնդիրներ, որոնք թեև ունեն օրենսդրական կարգավորում, սակայն այսօր էլ արդիական են: Ստորև կներկայացնենք դրանցից մի քանիսը, որոնց վերաբերյալ, ի թիվս այլնի, տեղեկություններ ենք ստացել ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2018 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցից, ազատությունից զրկված անձանց կողմից ուղարկված անհատական դիմումներից և զանգվածային լրատվական միջոցներից:

1. Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ բժշկական զննությունը իրականացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները սահմանված կարգով գրանցվում են անձնական գործում, և այդ մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման հավելված 1-ի 37-րդ կետի համաձայն՝ Կալանավորվածներին պահելու վայր ընդունվելիս (այդ թվում՝ տարանցմամբ) անձինք անցնում են նախնական բժշկական զննություն, որի արդյունքներն արձանագրվում են համապատասխան մատյանում՝ բժշկական օգնություն ցույց տալու և մարմնական վնասվածք կամ առողջական վիճակի վերաբերյալ այլ զանգատ արձանագրելու նպատակով: Կալանավորված անձի կամ դատապարտյալի բժշկական զննության արձանագրումը պետք է ներառի՝

1) բժշկական զննության ենթակա անձի կողմից արված բոլոր հայտարարությունների ամբողջական պատկերը (ներառյալ իր առողջական վիճակի նկարագրությունը և վատ վերաբերմունքի մասին ցանկացած հայտարարություն):

2) օբյեկտիվ բժշկական զննության արդյունքների ամբողջական պատկերը:

3) բժշկի եզրակացությունը՝ հիմնված սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերի վրա:

Բոլոր բժշկական զննությունները պետք է անցկացվեն քրեակատարողական կամ այլ ծառայողների լսողության և տեսողության սահմաններից դուրս:

Չնայած այս կարգավորումներին՝ քրեակատարողական հիմնարկներում, ՁՊՎ-ներում, ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության կարգապահական մեկուսարաններում ազատությունից զրկված անձինք պատշաճ բժշկական զննության չեն ենթարկվում: Մասնավորապես արձանագրվում են դեպքեր, երբ բժշկական զննությունը իրականացվում է համապատասխան հիմնարկի ոստիկանական ծառայողի և հերթապահ պատասխանատուի ներկայությամբ կամ վերջիններիս տեսանելիության և լսելիության սահմաններում: Բացի այդ, հաճախ բժշկական զննության արդյունքները կամ վնասվածքները պատշաճ չեն արձանագրվում և չեն ամրագրվում ազատությունից զրկված անձի բժշկական քարտում: Այսպիսով հնարավորություններ չեն ստեղծվում հնարավոր խոշտանգման դեպքերի վերաբերյալ իրականացնել պատշաճ բժշկական զննություն և դրա արդյունքների արձանագրում:

2. Խնդիրներ են առկա ազատությունից զրկված անձանց պատժախուց տեղափոխելու կարգապահական տույժի կիրառման վերաբերյալ: Մասնավորապես արձանագրվում են դեպքեր, երբ պատժախուց տեղափոխելու կարգապահական տույժը կիրառվում է ազատությունից զրկված այն անձանց նկատմամբ, որոնք գտնվում են ստացիոնար բուժման մեջ, ինչն անթույլատրելի է: Դրա հետ մեկտեղ հաճախ արձանագրվում են դեպքեր, երբ պատժախուց տեղափոխված ազատությունից զրկված անձանց նկատմամբ չի իրականացվում ամենօրյա պատշաճ բժշկական հսկողություն:

3. Առ այսօր արդիական է մնում քրեակատարողական հիմնարկների գերբնակեցման և խցերում անհավասար տեղաբաշխման խնդիրը: Մասնավորապես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում չեն պահպանվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ազատությունից զրկված անձանց համար նախատեսված բնակելի տարածության նվազագույն չափերը:

4. «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող դիմումատուների բողոքները առավելապես վերաբերում են սանիտարահիգիենիկ և պահման ընդհանուր պայմաններին: Մասնավորապես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի շենքային պայմանները գտնվում են խիստ վատթար վիճակում, ջրահեռացման և ջրամատակարարման համակարգերը գտնվում են տեխնիկապես մաշված վիճակում, հիդրոմեկուսիչ շերտը ժամանակի ընթացքում քայքայվել է: Սրանով պայմանավորված քրեակատարողական հիմնարկում տիրում է զարշահոտություն, կարանտինային խցերը խոնավ են, պատերը քանդված, զուգարանները գտնվում են հակասանիտարահիգիենիկ վիճակում, որոշ խցերում առկա են նաև լուսավորման և ջեռուցման

խնդիրներ: «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պատշաճ կերպով չեն իրականացվում նաև ախտահանման և մակաբույծների ոչնչացման աշխատանքները, մասնավորապես պատերին, խցի հատակին, պահարանների մեջ, նույնիսկ հագուստի, ուտելիքի և սպասքի մեջ առկա են միջատներ:

Վերոգրյալի վերաբերյալ 2018 թվականի սեպտեմբերի 20-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճիռ հրապարակեց Գասպարին ընդդեմ Հայաստանի, որտեղ ի թիվս այլ հարցերի, բարձրացվել էին նաև 2008 թվականին Նուբարաշեն ՔԿՀ պայմանները: ՄԻԵԳ-ը ընդունել է, որ տվյալ գործով դիմումատուն Նուբարաշեն ՔԿՀ-ում գտնվելու ընթացքում ենթարկվել է անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի՝ պայմանավորված խցի վատթար պայմաններով: ՄԻԵԳ-ը ընդունել է, որ առանձին խցեր եղել են գերբնակեցված և ունեցել են հակասանիտարական վիճակ, ինչը հավասարազոր է անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի¹:

5. ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության կարգապահական մեկուսարանի խցերում արձանագրվել է, որ էլեկտրական լուսավորությունը չի անջատվում ամբողջ գիշերվա ընթացքում, ինչը մեկուսարանի վարչակազմի կողմից բացատրվում է իբրև որպես խցում պահվող անձանց հսկելու միջոց: Այսպիսով չեն ստեղծվում քնելու համար պատշաճ պայմաններ, ինչն անմարդկային վերաբերմունք է խցերում պահվող անձանց նկատմամբ:

6. Քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող անձինք զրկված են պատշաճ հոգեբուժական ծառայություններ ստանալու հնարավորությունից, քանի որ քրեակատարողական հիմնարկներում բժշկական անձնակազմերը հիմնականում համալրված չեն հոգեբույժներով: Այսպիսի պայմաններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ստացիոնար բուժումը կարող է կազմակերպվել միայն «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում, որտեղ կին կամ անչափահաս ազատությունից զրկված անձանց համար համապատասխան բաժանմունքներ կամ պայմաններ նախատեսված չեն: Արդյունքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ազատությունից զրկված անձանց քրեակատարողական հիմնարկներում հոգեբուժական ծառայություններ չի տրամադրվում, իսկ նրանց տեղափոխումը մասնագիտացված բաժանմունք հաճախ կատարվում է ձգձգումներով,

¹ Տե՛ս Գասպարին ընդդեմ Հայաստանի գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռ, գանգատ թիվ 44769/08, կետ 54-72

ինչի պատճառով հնարավոր են անդառնալի հետևանքներ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ազատությունից զրկված անձանց առողջությանը:

7. Համաձայն ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2018 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցի՝ «Սևանի» հոգեբուժական հիվանդանոցում, «Արմաշի» առողջության կենտրոնում և Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնում արձանագրվել է, որ պացիենտների նկատմամբ կիրառվել են ֆիզիկական զսպման միջոց այլ պացիենտների տեսողության սահմաններում, ինչը հակասում է ՀՀ օրենսդրությանը, իսկ «Ավան» հոգեկան առողջության կենտրոնում պացիենտներից մեկի նկատմամբ իրականացվել է ֆիզիկական զսպում՝ բաժանմունքի միջանցքում տեղադրված երկաթե մահճակալին ուժի գործադրմամբ կապելու միջոցով (սինթետիկ ժապավեններով կապվել են ձեռքերն ու աջ ոտքը), ինչը նախատեսված չէ ՀՀ առողջապահության նախարարի 2016 թվականի օգոստոսի 23-ի թիվ 2636-Ա հրամանի 6-րդ կետով: ՄԻՊ ներկայացուցիչների կողմից արձանագրվել է նաև ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի օգոստոսի 29-ի թիվ 2210-Լ հրամանով նախատեսված մեկուսացման կարգի խախտում, մասնավորապես «Զորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնում 1-ին մասնաշենքի B-1 բաժանմունքում կողպված բավականին մեծ սենյակում պահվել են երկու խնամվող: Պաշտպանի ներկայացուցիչներից կողմից դուռը բացելու պահանջից հետո խնամվողներից մեկը շտապել է սանհանգույց, ինչից ակնհայտ է, որ խնամվողը չի ունեցել սանհանգույցի հասանելիություն և տևական ժամանակով կողպված սենյակում պահվել է մեկուսացված: Այսպիսով հոգեբուժական կազմակերպություններում ևս բժշկական անձնակազմի կողմից արձանագրվում են խոշտանգման, անմարդկային վերաբերմունքի մեթոդներ խնամվողների նկատմամբ, որոնք ուղղակիորեն հակասում են ՀՀ օրենսդրությանը: